Կարաւանի ճանապարհն Ջետըկանէն գալով՝ աստի կանցնի յարևելս, ի Գարա-Քիլիսէ, ի Պայազիտ ի Պարսկաստան կը գնայ։ Նաև աստի կը բաժանուի Վանայ ձմեռուան ճանապարհն 2 1/2 ժամ բարձրանալով ի Դլիճ կետուկ, ի Հարաւ. ապա ի Հարաւ արևելս ուղղուելով Ընդափի եօթ, ութ գիւղերէն բաղնոց, ուստի Արճէշ, յորմէ Վան։

Մի ճանապարհ ևս (Մշոյ, Պուլանխայ, Մանազկերտի) աստի անցնելով կը գնա Ռուսաստան։

Չլկանի[1] կարաւանի ճանապարհի վերայ լինելով՝ ժողովուրդն պատրաստած է պանդոկներ ու կօթեանին անցորդներին, նաև ուղտերու կարաւանը։

Վերջին պատերազմէն յետոյ գիւղս վերադարձող գաղթական տանց թիւն էր 20—25։ Պատերազմէն յետոյ տակաւ առ տակաւ Վանայ, Պուլանխայ կողմերէն գալով գիւղս հաստատուած են որ այժմ տանց թիւը 60ի կը հասնի և ամբողջովին հայ են։

Գիւղս ունի բերրի հողեր, ընդարձակ քաւշան, որ կը տարածուի Շեռեանայ ձախ ափին վերայ, յարևելս Ղազի. ի հիւսիս՝ Միրանկի, յարևմուտս հիւսիս Շամեան և յարևմուտս Զուրուկ գիւղօրէից քաւշանին կը խառնուի։ Այս գիւղիս մարգագետիններն ևս տարածուած են յայնկոյս Շեռեանայ, ի Դլիճ կետուկ բարձրացող 2 ժամ երկարութեամբ զառիվերին, բացի Հաշտոյ գիւղէն որ այս զայռի վերայ գրաւած է փոքր մաս մի մարգագետին 5—6 տարի է ի վեր աստ բնակութիւն հաստատած 30 տան չափ եղզի ժողովրդով։

1, Գիւղիս ժողովրդեան կէսն վոըշիկ հայերէ կազմուած է, որք աւելի աշխատաւոր եւ համեստ կեանք ունին: